Արձանագրություն N 5

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» մայիսի 2016թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝
Խորեն Պետրոսյան ՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,
Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,
Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝
Մարիամ Հայրապետյան (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Կարեն Մելքոնյանը՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/08-07» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին

Միաժամանակյա բանակցություններին ներկա է գտնվել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն:

Միաժամանակյա բանակցություններին ներկա չի գտնվել «ՋԻ ԷՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ -ն:

Միաժամանակյա բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին նիստին ներկա մասնակցի կողմից առաջարկված գներն են.

ՀՀ դրամ

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ				
		Ինքն արժեք	Շա հույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
8	Փոշի (Տոներ)	35100	3900	39000	7800	46800*
26	Թմբուկ յունիթ	220320	21480	241800	48360	290160

**մասնակիցը հայտով ներկայացրած իր գնային առաջարկը թողել է անփոփոխ:*

2. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին.

2.1 8-րդ չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին՝ նիստին ներկա մասնակիցը Հայտով ներկայացրած իր գնային առաջարկը թողել է անփոփոխ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց՝

ա) հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

բ) հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

3.1. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՋԻ ԷՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ** -ին.

1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ -ին:

2-րդ և 10-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

3-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ -ին:

3.2. **11-րդ** չափաբաժինի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին:

3.3. **12-րդ, 15-րդ, 22-րդ, 24-րդ և 29-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ** -ին.

12-րդ, 15-րդ, 22-րդ և 24-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին,

29-րդ չափաբաժնի մասով ներկայացված այլ հակտեր չկան:

3.4. **13-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 25-րդ, 26-րդ և 27-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ** -ին.

13-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ-ին,

16-րդ և 26-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

17-րդ, 23-րդ, 25-րդ և 27-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ -ին,

19-րդ չափաբաժնի մասով ներկայացված այլ հակտեր չկան,

20-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

3.5. **14-րդ և 18-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ**-ին.

14-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին,

18-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ -ին:

3.6. **21-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ** -ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «ԱՐՏ ՏԵԽ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի քարտուղարին.

4.1 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը:

4.2 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի մայիսի 27-ը ներառյալ ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված փաստաթղթերը:

4.3 Հաշվի առնելով, որ «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն՝ 15-րդ, 22-րդ, 24-րդ և 29-րդ չափաբաժինների մասով, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն՝ 19-րդ, 23-րդ և 25 չափաբաժինների մասով, «ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ-ն՝ 14-րդ չափաբաժնի մասով, «ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ-ն՝ 21-րդ չափաբաժնի մասով ներկայացրել են չհիմնավորված ցածր գնային առաջարկ (գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն

գնի 75 տոկոսից) և ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ծանուցել ներքոնշյալ կազմակերպություններին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի մայիսի 27-ը ներառյալ, ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված լրացուցիչ փաստաթղթային հիմնավորումներ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2016 թվականի մայիսի 31-ին, ժամը՝ 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Անահիտ Ավագյան

Քարտուղար՝ _____ Մարիամ Հայրապետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 8- ՐԴ ՉԱՓԱԲԱԺՆԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի մայիսի 23-ի թիվ 5 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

Չափաբաժին	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝ այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
8	Փոշի (Տոներ)	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ, «ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները. սահմանված կարգով կազմակերպված՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ներկա «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ -ն հայտով ներկայացրած իր գնային առաջարկը թողել է անփոփոխ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**